38. ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՒՐԻՍԱՆ ԱԽՉԻԿ

Ժամանակին կէղնի թագավորըմ։ Օր մը էդ թագավոր կառնե զուր քուլֆաթ, կնստի կյամին, զըվրոնելու համար։

Կէրթա կյամին ֆրոթոնի ռաստ կիգա։ Կիգա կմոտենա քաղքի մը խայեղչիկ հոն կէղնին, զքուլֆաթ կազատին ու ըզթագավոր։ Էդ փոթորկի ժամանակ, տախտակ մը կփրցնա կյամուց, ախչիկ կմնա վրեն, կէրթա ջրի հետ։

Շատ կէրթա, քիչ կէրթա, կիգա գեղի մը ռաստ։ Հովիվ զօչխար կբերե գետի ջրի վրա, կիշե օր տախտըկի վրա ախչիկըմ կա նստուկ։ Կբռնե հանե տախտըկի վըրավեն, իր հետ կօլորտցու հըր իրկուն, իրիկուն կբերե տուն։

Մամ կըսե.— Էդ ի՞նչ ախչիկ է, լաո։

Կըսե.— Վալլա, հ՝ըտօր ջրի հետ էկավ։

— Է,—կըսե,— լաո, թըղ իգա, կէնինք մըզի զավակ, կպահինք։

Տաս, տըսվիրեք տարի զէդ ախչիկ կպահեն։

Ախչիկ մեծցավ, էղավ կարգվելու։

Տղի մամ ըսեց.—Ախչի լաո, էվից, ատամից էղե, մարթ օր հասնի, պետք է կարգըվի։ Զքզի պետք է իրկա իտանք։

Ախչիկ ըսեց.— Քու խոսքն է։ Ես կիշեմ քու տղեն լե ազաբ է, էն օր զիս ուրիշին իտեք, թըժա էրթամ խալղի համ ու հերս քաշիմ, թե աղեկ իմ, թե վատ իմ, դուք գինաք ղիս, զիս պսակե քու տղի վրա։

Մամ ըսեց.— Լաո, մադամ ըդ ավա է, իրկուն թըղ իգա տղէն,

Հարցում, թե ռազի էղավ՝ դաթի ըղբըզի կպսակեմ իմ տղի վրա։

Տղեն իրկուն էկավ։

Տղին ըսեց.— Լաո, ախչըկան կըսիմ. թե աղեկ իմ, թե վատ իմ, հանդե դուք դինուք ու էնոր իտեք ուրիշի, պսակե քու տղի վրա զիս։

Տղեն ըսեց.— Մամո, դու դինաս, եթե քու սըրտով էղնի, իմ սըրտով է։

Մամ էկավ ախչըկան ըսեց.— Իմ տղեն ընդունեց։

Ախչիկ կվերու կըսե.— Բա մը լե ըսեմ քըզի, զըտ պայման լե կդընինք մըր մեչ, ես օր պսակվա քու տղի հետ, անտվածՕր մըզի զավակ տրվեց, խայիլ չիմ տերտեր զանուն դնե, ես կդնիմ։ Հարցու քու տղից, թե խայիլ է, կպսակվիմ, թե խայիլ չէ՝ չըմ պսակվի։

Տղեն կիգա իրկուն տուն, մամ կհարցու տղից։ Կըսե.—Ախչիկ հըմլա կըսե, լաո, ի՞նչ կըսես։

Կըսե.— Հայդե տերտեր թըղ չըդնե, կընդունիմ։

Կպսակվին, տաս տարի կապրին իրարու խեչ։ Աստվածութեն ըդ տաս տարու մեչ կիտա իրեք զավակ։

Ախչիկ կդնե առջընեկի անուն՝ Ի՞նչ էնինք, միճնեկին կըսե՝ Ի՞նչ էղավ, պզտիկին՝ լե կըսե՝ Ի՞նչ պիտի եղնի։

Քանի մը տարի հ՝ընցավ։ Թագավոր մտածեց, օր ըդ ախչըկա մեղք գիշեր-ցերեկ զինք կտանջե։ Ըսեց. «Վալլա, պիտի էլլամ էրթամ, օլորտիմ, հար հ՝ուր էղնի, զըդ ախչիկ պտի գըդնամ»։

Փոխեց զուր շորերն ու էլավ գնաց ախչըկե էտև օլորտելու։

Տարի մը չափ օլորտավ, էկավ գեղի մը ըռաստ, հ՝ուր գընաց, ըտ գեղի մեջ մսաֆըր չպահեցին։ Էկավ աղքատ տան մը դռան առեջ կանավ։ Հովիվի դուռն էր։ Ըսեց.— Աստծու մսաֆըրն իմ, կընդունե՞ք զիս։

Ըսեցին.— Հ՝որի՞ չընք ընդունի, կընդունենք։ Իրկուն էղավ, նըստան կերան հաց։ Հովիվ ըզտղայի անունին տվեց.—մեկին ըսեց.—Ի՞նչ էնինք, ջուրըմ տուր։

Միճնեկ տղին ըսեց.— Ինչ եղավ, կրակ ըրի։

Պզտիկին լե ըսեց.—Ինչ պիտի եղնի, յաթաղ ըրի։

Թագավոր դըրեց ֆքրավ, օր էղավա անուն աշխըրքի մեջ լըսած չեղնի։ Ըսեց.— Նա իդա յաթաղի մեջ կըպառկիմ, նա զձեր հաց կուտեմ, հէդա բան պիտի լըստըկեք, ըդ ի՞նչ անուն եք դուք դրի։

Տղի մամ վերուց ըսեց, թե.—Զըմ գինա, իմ հարսն է դրի։

Ըսեց.— Քու հարս հ՝ուա՞տ ա, պետք է շիտակն ըսիս։

— Շիտակն,— ըսեց,—հ՝ոդա յա, ջըրի հետ էկավ, իմ տղեն գըտավ

բերեց. էկավ, պահեցի, մեծցուցի, պսակեցի իմ տղի վրա։ Ուր տղի անունին լե ինք է տրրի։

Ըսեց թագավոր.—Օր էդավա էղնի, ըղ իմ ախչիկն է։

Էլավ հաստատեց օր ուր ախչիկն է։ Իշեց օր հ՚ոդի նեղության մեջ կապրին։ Էլավ առավ ղախչիկն ու փեսեն ու ղբուլֆաթն, տարավ ուր քաղաք։

Ասաց.—Օրհնյալ աստված, էղա ախչկա մեղք իմ վրզից վերցավ։